դրախտ է գրեթէ։ Այսպիսի հարուստ և պատուա-
կան երկրի բնակիչները չնայելով որ չափազանց
աշխատասէր և սակաւապետ են, բայց այսու ա-
մենայնիւ նրանք գտնւում են վերջին ծայր աղ-
քատութեան և թշուառութեան մէջ։ Անտարակոյս,
հետաքրքիր ընթերցողս կհարցնէ ինձնից, թէ
«ի՞նչ է պատճառը, որ Ուտիացոց երկիրը այդչափ
բարեբեր ու առատ երկիր է իւր պէսպէս բեր-
քերով, իսկ երկրագործ ժողովուրդն էլ գիշեր ու
ցերեկ աշխատում է անդադար և հետևում իւր
գործին, բայց և այնպէս նա գտնւում է աղքատ
և խեղճ վիճակի մէջ»։ Նրա աղքատութեան և դըժ-
բաղդութեան գլխաւոր պատճառն այն է, որ Ու-
տիացոց երկրի ժողովուրդը գտնւում է վերջին
ծայր տգիտութեան և թանձր խաւարի մէջ թա-
ղուած։ Պետական օրէնքներն ու կարգերը նա
չգիտէ, լեզու չգիտէ, որոնցից նա կարողանար
օգտուել։ Արդարադատութեան և տիրող օրէնքի
պաշտպանութեան մասին նա շատ մութ գաղա-
փար և ծուռ հասկացողութիւն ունի։ Այս իսկ
պատճառով նրան չարաչար հարստահարում ու
կողոպտում են անիրաւ թուրք բէկերն ու ան-
խիղճ վաշխառուները, պետական գաւառական
ստորին պաշտօնեաներն ու գիւղապետները (իւղ-
բաշիները), գիւղական դատաւորները, անպար-
տաճանաչ և շահամոլ քահանաներն ու նրանց հա-
մախոհները։ Իսկ այս սովորական պատուհասնե-
րից զատ, մեացած չարիքներն էլ լրացնում են
արիւնարբու աւազակներն ու բնութեան արհա-
ւիրքները, որպիսիք են՝ կարկուտն ու կայլածա-